Կրօն
1, Եկեղեցական Պատմութիւն Հայոց, ընդարձակ։
2, Քրիստոնէական Վարդապետութիւն Հայ Եկեղեցւոյ, ընդարձակ։
3, Սրբազան պատմութիւն Հին և Նոր Կտակարանի, ընդարձակ։
4, Ծանօթութիւն Աւետարանացն Ղուկասու, Յովհաննու և Գործոց Առաքելոց։

Լեզուք
1, Հայոց լեզու, գրաբառ շարադրութիւն.
2, Ռուսաց լեզու, շարադրութիւն.
3, Ֆրանսերէն լեզու, թարգմանութիւն։

Նիւթք ըստ դպրոցական ծրագրի։

Այդքիկ առարկայք նշանակեալ են վասն այնոցիկ, որք ստացեալ գոլով զվկայական աւարտման դպրոցական ընթացից՝ ցանկան մտանել ի Ճեմարան մինչչև անցեալ իցէ առաւել քան զամ մի ի թուականէ ստացմանն վկայականի. իսկ եթէ առաւել քան զամ մի անցեալ իցէ ի վերայ, յայնժամ ունին քննիլ յամենայն առարկայս դպրոցական ընթացից, համաձայն Շրդ յօդուածոյ ծանուցման Վարչութեանս։

ՏԵՍՈՒՉ ՃԵՄԱՐԱՆԻ ՆԱՀԱՊԵՏ ԱՐԵՂԱՑ

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ

Ի ՎԱՐՉՈՒԹԵՆԷ ՃԵՄԱՐԱՆԻ

1. Քննութիւնք ընդունելութեան յաշակերտութիւն Ճեմարանի Մայր Աթոռոյս Սրբոյ Էջմիածնի կատարին մի անգամ և եթ ի տարւոջ և այն աւուրքք ինչ յառաջ քան զսկիզբն ուսումնական տարւոյ։

2· Յանկացողք մտանել յաշակերտութիւն Ա՛եմարանիս մատուցցեն խնդիր յանուն Վ եհափառ Կաթուղիկոսին, ոչ անագան քան զմին Օգոստոս ամսոյ։

3· Ընդ խնդրագրին պարտէ առաջի առնել զվկայագիրս ուսման, բարի վարուց, ծննդեան և մկրտութեան և պատուաստման ծաղկի։

4· Նորեկ աշակերտք և ուսանողք զնին ի բժշկէ Ա՛եմարանիս, որ և տայ Տեսչին զգրաւոր տեղեկութիւն զառողջութենէ նոցա։

5· Ի դպրոցական դասարանս ընկալեալ լինին առհասարակ ուսեալքն ի վարժարանս և կամ հրահանգեալքն առտնին կրթութեամբ, իսկ յառաջին լսարան Ա՛եմարանիս՝ նոքա միայն, որք ունին վկայագիր աւարտման դպրոցական դասընթացից։

6· Յետ կանոնաւոր հարցաքննութեան ընկալցին յաշակերտութիւն յամենայն դասարանս Ա՛եմարանիս· իսկ վասն մտանելոյ Ա՛ռաջին լսարան՝ ենթարկեսցին հարցաքննութեան յայն յամենայն առարկայս՝ զորս կարեւոր համարիցի Ուսումնական խորհուրդն։

Մանրամասն. Վասն մտանելոյ Գ· դասարան պահանջի անթերի գիտութիւն դասընթացից Եր-դոէան եկեղեցական-ծխական ուսումնարանաց· իսկ վասն մտանելոյ ի միւս դասարանս աշակերտք պարտին քննիլ ըստ ծրագրի հաստատելոյ ի Վ եհափառ Կաթուղիկոսէն, ի պետս Ընդհանուր դպրոցաց։

7· Յանկացողք մտանել յառաջին լսարան Ա՛եմարանիս վկայագրով աւարտման դպրոցական դասընթացից, վերստին ունին ենթարկիլ հարցաքննութեան յամենայն առարկայս, երբ զնոսա առաջնոյն անցեալ էջեր է վերայ առաւել քան զամ մ։

8· Յետ հարցաքննութեան ընկալեալ լեցին ի շարս աշակերտաց՝ որք արժանաւոր դատիցին Ա՛ռ-

ուսումնական խորհրդոյն։

Ծանօթութիւն․ Պահանջի զի ընկալեալքն յաշակերտութիւն լիցին ուշիմք, երկարոգիք, փափկաձայնք, բարեկազմք և բարեբարոյք։

9․ յԳ․․ դասարան Ճեմարանին ընկալեալ լիցին պատանիք 14—16 ամեայ, և ըստ այսմ համեմատութեան ի յաջորդ դասարանս։

10․ Աշակերտք Ճեմարանի գիշերօթիկք են ամենեքեան, թէ ձրիավարժքն և թէ թոշակաւորքն, որք ստանան զուսումն, սնունդ, հագուստ և զամենայն առողջապահական խնամս։

11․ Թիւ ձրիավարժից, որ ի հաշիւ Մայր Աթոռոյս, որոշի ամ ըստ ամէ, ըստ բարեհաճ կարգադրութեան Վեհափառ Կաթուղիկոսի։

12․ Աշակերտեալքն պարտին կանխաւ մատուցանել ի գրաւ յայսկոյս կովկասեանք 50 ռուբլիս, իսկ եկեալքն յայլոց վիճակաց Ռուսաստանի կամ ի տար աշխարհաց՝ ռուբլիս 75, որպէս զի հատուսցի այդ ի ծախս վերադարձի նոցա ի հայրենիս, եւ ի գին կորուսեալ և վատնեալ գրենոյ, հանդերձեղինաց և այլոց իրեղինաց։

13․ Իւրաքանչիւր թոշակաւոր վճարեսցէ ի տարին ռուբլիս 200, ի կրկին նուագս․ ի Սեպտեմբեր և ի Յունվար ամիսս։

14․ Եթէ թոշակաւոր ոք ելցէ կամ արձակիցի մինչչև բոլորեալ ուսումնական կիսամեկին, թոշակ նորա ոչ դարձուսցի յետս։

15․ Յամառնային արձակուրդս, եթէ ծնօղք կամ բարերարք կամիցին տանել զորդիս իւրեանց ի հայրենիս, ծախք երթևեկութեանց նոցա լիցին ի ծնողաց կամ ի բարերարաց։

Ի ՏՊԱՐԱՆԻ Ս. ԿԱԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ Ի ՎԱՂԱՐՇԱՊԱՏ։